


7333

3KuL
9-74

1934



Հ. Ի. Մագնուսին

համկարակ
համացումայր և

XVII ԽՈԱՐ



Պաշտպանութեան -

Բայուց

ՅԿՊՀ
Դ-74

23 SEP 2006

Կ. Ե.ՊՈԴՍՈՑՄԱՆ

ՅԿՊՀ

Դ-74

ՀԱՅԿ (Բ)Կ XVII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՎ
ԽՍՀՄ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1998 3 9
350919

10285



984

ՅԵՎԵՐԵՎԱՆ

22 JUL 2013

3333

Ներկա բըոշյուրը գրված և 17-րդ կուսաձա-
գումարի նյութերի հիման վրա Բըոյցուրը նկատի
ունի Կարմիր բանտկի անձնակազմը, ոսո-ավելո-
խիմցէները և կուսիրհբդային լայն ակտիվը



Կ 9 6 2 2 - 6 5

Պատ. Խմբագիր Վ. Դ. ազանջյան
Խմբ. 2. Ալեքյան
Թարգմ. Գրաքիռն
Տեխն. Խմբ. Գ. Չհենյան
Մրգագրի Ա. Տ. -Մկրտչյան
Հրամ. № 2989
Գրական համար № 8558 (ր)
Պատվ. № 153
Տիրաժ 3000

Հանձնված և առաջնային 19 մայիսի 1934-ը
Ստորագրված և սպելու 8 հունիսի 1934-ը.
Կուսաձագի ապահով, Ալլավերդյան 27

ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կուսակցության 17-րդ համագումարը, —
հաղթողների համագումարը, լենինյան կու-
սակցության մեծ համագումարը, — արտա-
ցոլում և պատմական մի ամբողջ եպոսի,
վորը Խորհրդային Միությունը վերածեց
պրոլետարական հուժկու պետության:

«Մենք արդյունաբերական տեսակետից
ամենահետաժամաց յերկրներից մեկն եյինք,
ամենաազարարային յերկրներից մեկն եյինք
Յեղոպայում: Մենք դարձանք աշխարհում
ամենափուստրիալ յերկրներից մեկը:»

Մենք մանր, բաժան-բաժան ու հետա-
միաց հողագործության յերկիր եյինք:
Մենք դարձանք կազմակերպված, աշխարհի
ամենախոշոր մեքենայացրված հողագործու-
թյան յերկիր:

Մենք արորի յերկիր եյինք: Մենք դար-
ձանք արակառի ու կոմբայնի յերկիր

Մենք նպատականության, միջնադարի
ու անդրագիտության յերկիր եյինք: Մենք

դարձանք, ավելի ճիշտ, դառնում ենք
դրագիտության ու կուլտուրականության
տեսակետից ամենառաջավոր յիրկըներից
մեկը:

Մենք խիստ հետ եյինք մնում առաջավոր
կապիտալիստական յիրկըներից ուղղական
տեսակետից և միշտ ել գտնվում եյինք
մեր շահերի վոտնահարման սպառնալիքի
տակ՝ մինչև իսկ փոքր յիրկըների կողմից:
Այժմ մենք դարձել ենք, ինչպես այդ առանձ
նապես ցայտուն կերպով յիրկաց համա-
գումարում, առաջնակարգ, հզոր, սպառազին-
ված ուժ յիշ վճռական գործոններից
մեկն ամբողջ աշխարհում խաղողուրլան
համար մղվող պայքարում:

Մենք այդ բոլորին հասունք, ըսկերներ,
ամենակատաղի պայքար մղելով բազմա-
թիվ դասակարգային թշնամիների գեմ,
պայքար մղելով կապիտալիստական վերջին
լուրջ դասակարգի՝ կուլակության դեմ:
Նրան ողնում եր համաշխարհային կապիտա-
լիզմը, կազմակերպելով վնասարարություն
ու հականեղափոխական խմբակներ. նրան
ողնում եյին մեր կողմից ջախջախված
աջերը, տրոցկիստներն ու «Ճախ» ոպոր-

տունիստները մեր սեփական շարքերում:
Մենք ջախջախեցինք կուլակությունը,
ջախջախեցինք վնասարարական հակա-
նեղափոխական խմբակներին ու ոպորտու-
նիստներին:

...Այդ տարիներում մենք մղեցինք վեր-
ջին ու վճռական մարտը ոռւսական կապի-
տալիզմի գեմ, մի մարտ, վոր նախագու-
շակել եր Լենինը: Յեզ այդ մարտը հանճարեղ
կերպով ու հաղթականութեն մղեց կոմունիզմի
մեծ բանակը, —մեր կուսակցությունը՝ իր
առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարու-
թյամբ (Կագանովիչ):

Համագումարն անցավ ծավալուն բոլե-
վիկյան ինքնաքննադատության նշանա-
բանի տակ: Համագումարն անցավ մեր
ամբողջ աշխատանքի վորակի խստիվ բա-
րելավման համար պայքարի նշանաբանի
տակ: Յերգորդ հնգամյակի պլանը վարակի ու
խնամկի տեսակետից պետք է կատարվի որինա-
կելիութեն ու լրիվ կերպով և նշված ժամկետից
վոչ ուշ: Համագումարն անցավ վերակառուց-
ման ձևերը վորոշելու և աշխատանքները
նոր ձևով կազմակերպելու նշանաբանի տակ
այնպես, վոր ապահովվի ամբողջ ղեկավար
աշխատանքի բարձր վորակը, բարձրանա

ոպերատիվությունը և աշխատանքի սիս-
տեմի մեջ մտնի կատարման ստուգումը:
Այս ամենը պահանջվում էն մեր հեղափո-
խության զարգացման նոր ետապով, յերկ-
րի արտադրական ուժերի զարգացման
նոր բարձրագույն աստիճանով, յերկրի
պաշտպանունակության ուժեղացման պա-
հանջներով:

Կուսակցության 17-րդ համագումարի
վորոշումները վկայում են դեպի խաղաղու-
թյունն ունեցած մեր կամքի մասին, պա-
տերազմի հրձիկներին զիմադրություն ցույց
տալու մեր պատրաստակամության մասին
կարմիր հրապարակում կայացած ռադմա-
կան զորահանդեսին Մոսկվայի կայազորը
համագումարի առաջ ցուցտհանեց նոր մար-
տական տեխնիկան, վորը քանակապես
ու վորակապես անչափ աճել եր կուսակցու-
թյան 16-րդ համագումարից մինչև 17-րդ
համագումարը յեղած ժամանակամիջոցում:
Համագումարն ասաց, վոր վոչ միայն ամե-
նապաշտակոր ու կատարելագործված պաշտ-
պանության միջոցները կարմիր բանակի
համար, այլև աշխատանքի որինակելի կազ-
մակերպումը սոցիալիստական շինարարու-

թան բոլոր բնագավառներում,—ահա թե
ինչ են լուծում յերկրի պաշտպանունակու-
թյան ամրացման հարցը, Յուրաքանչյուր
կուսակցական կազմակերպության, յուրա-
քանչյուր տնտեսական միավորության
ու խորհրդային ձեռնարկության, յուրա-
քանչյուր ամենահեռավոր գյուղխորհրդի ու
կոլտնտեսության աշխատանքը հսկայական
նշանակություն ունի յերկրի պաշտպանու-
թյան ամրացման գործում:

«Համկոմիկուսի կենտրոմի աշխատանքի
մասին 17-րդ կուսահամագումարում ընկ.
Ստալինի արած հաշվետու զեկուցման և
Համկ (Բ)կ 17-րդ համագումարի վորո-
շումների ուսումնակրությունը պետք ե
ել ավելի բարձրացնի կարմիր բանակի
կուսակազմակերպություններում գաղափարա-
կան բոլշևիկյան դինվածությունը, բարե-
լավի ամրողներկուսակցական աշխատանքը,
ապահովի մարտական ու քաղաքական
պատրաստության խնդիրների կատարումը»
(ընկ. Դամարնիկի 11/II—34թ. ցուցմունքից):

ԳՈՐԾՆ ԱԿՆՀԱՅՑ ԿԵՐՊՈՎ ԳՆՈՒՄ Ե ԴԵՐԻ ՆՈՐ ՊԱՏԵՐԱՅՄ

Հինգերորդ տարին ե, ինչ կապիտալիստական տնտեսությունը քայլայվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամից, վորպիսին ընթանում է կապիտալիզմը ընդհանուր ճգնաժամի պայմաններում։ Այժմ չեն վիճում այն մասին, թե կամ արդյոք համաշխարհային ճգնաժամը թե վոչ, «այժմ արդեն ուրիշ բանի մասին են վիճում — կարևոր յերգյոք կուրս զալ ճգնաժամից, թե յելք չկա, իսկ յեթե յելք կա, ապա այդ բնչակես իրականացնելը» (Ատալին):

Կապիտալիստական աշխարհը յելք ե փնտրում պատերազմի մեջ, վորպեսի փոքրձիմի անգամ ես նոր ձեռով վերաբաժանել աշխարհը, վորպեսպիզենքով լուծի կապիտալիստական յերկրների միջև սրված հակասությունները։

«Արտաքին շուկաների համար մղվող պայքարի ուժեղացումը, ապատ տնտերի վերջին

մնացորդների վոչնչացումը, արգելիչ մաքսային տուրքերը, առևտրական պատերազմը, վայրուտաների պատերազմը, դեմպինզը և շատ ուրիշ համանման միջոցառութմները, վորոնք ցուցադրում են ծայրահեղ նացիօնալիզմը տնտեսական քաղաքականության մեջ, ծայրատիճան սրեցին հարաբերությունները յերկրների միջև, ուղղմական ընդհարութմների համար հող ստեղծեցին և հերթի գրին պատերազմը, վորպես աշխարհը և աղեղցության շրջաններն ավելի ուժեղ պետությունների ոգտին նոր վերաբաժանման յենթարկելու միջոց։

Ճապոնիայի պատերազմը Զինաստանի դեմ, Մանջուրիայի ոկուպացիան, Ճապոնիայի դուրս գալն Աղգերի լիդայից և առաջխաղալը դեպի Հյուսիսային.. Զինաստան — Ալավելի սրեցին դրաւթյունը։ Մեծ ովկիանոսի համար մղվող պայքարի ուժեղանալը և ուղմաշնուրագինութմների աճումը ճապոնիայում, ՀԱՄՆ-ում, Անդիայում, Ֆրանսիայում արդյունքն են այդ սրմանությունները։

Դիրմաննիայի դուրս գալն Աղգերի լիգայից և ուկիանչի ուրվականը նոր մղում տվին դրաւթյան սրմանն ու սպառադինությունների աճմանը Յելվրոպայում։

Զարմանալի չե, վոր բուրժուական պատիքիզմն այժմ քաշ և տալիս իր վողորմելի դոյլթյունը, իսկ զինաթափման վերաբերյալ դատարկախոսությանը փոխարինում են գործնականա խոսակցությունները սպառապինության ու լրացուցիչ զինման մասին:

Դարձյալ, ինչպես և 1914 թվին, առաջն պլան են մղվում ռազմատեհն չ իմպերիալիզմի կուսակցությունները, պատերազմի ու ռեվանշի կուսակցությունները:

Գործն ակնհայտ կերպով գնում ե դեպի պատերազմն (ընկ. Ստալինի 17-րդ կուսամագումարում արած դեկուցումից):

Ցուրաքանչյուր իմպերիալիստական յերկիր ունի պատերազմի կազմակերպման իր պլանները: Ընկ. Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում արած իր զեկուցման մեջ խոսեց այն մասին, թե ինչպես են կառուցվում այդ պլանները:

«Վոմանք կարծում են, թե պատերազմը հարկավոր ե կազմակերպել մեծ տերություններից մեկի դեմ»: Այդպիսի պատերազմ մըդկում եր մեքանի տարվա ընթացքում 1914—1918 թ. թ. շրջանում, յերբ իմպերիալիստական մի շաբթ պետություններ

հույս, ունեյին վոչնչացնել Գերմանիային և շահվել նրա հաշվին: Իսկ դրանից դուրս յեկալ այն, վոր «Գերմանիային նրանք չվոչընչացըին, բայց Գերմանիայում սերմանեցին այնպիսի ատելություն դեպի հաղթողները և ստեղծեցին ոեվանչի համար այնպիսի պարարտ հող, վոր մինչև այժմ զեռ չեն կարողանում ու թերևս շուտով չե, վոր կկարողանան խոլշտել (расхлебать) այն գարեւի շփոթը, վոր հենց իրենք են յեփել: Բայց դրա փոխարին նրանք ստացան կապիտալիզմի ջախջախում Ռուսաստանում, պրոլետարական հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և — պարզ ե — Խորհրդային Միությունը»: Յեվ նոր իմպերիալիստական պատերազմն այդ պլանի մեջ, վորի մասին ստածում հն իմպերիալիստական տերություններից վուանք, դժվար թե տա այլ արդյունքներ:

«Մյուսները կարծում են, թե պատերազմը հարկավոր ե կազմակերպել ուղմական տեսակետով թույլ բայց շուկայի իմաստով ընդարձակ յերկրներից մեկի դեմ, որինակ՝ Զինաստանի դեմ, հույս ունենալով նրա հաշվին ուղղել իրենց գործերը»: Այդ պատ-

ձառաբանվում ե նրանով, վոր այնպիսի
մի թույլ յերկիր, ինչպիսին ե Զինաստանը,
իրենից ներկայացնում ե «անկազմակերպ
տերիտորիա» և ուժեղ ազդեցությունների
կողմբց զավթվելու կարիք ունի: Ընկ. Ստալին
իր գեկուցման մեջ բերում ե Խտալի-
այի ու Գերմանիայի գեմ պատերազմի որի-
նակը, վոր տեղի յեր ունեցել 19-րդ
դարի սկզբին: Այդ յերկրները նույնպես
համարվում եյին «անկազմուկերպ տերիտո-
րիա»: Պատերազմի հետեանքով Գերմանիան
ու Խտալիան միավորվեցին, վորպես ինք-
նուրդոյն պետություններ: «Դրանից
ստացվեցին, ինչպես հայտնի յի, ատելու-
թյան դեմեռացումայդ յերկրների ժողովուրդ-
ների սրտերում գեպի ատրիացնողները,
վորի արդյունքները մինչև այժմ գեռ
վերացված չեն ու թերես զեռ շուտով չեն
վերանա: Յեկ նոր պատերազմը ուազմական
տեսակետից թույլ յերկրներից մեկնումեկի
դեմ, իմակերխալիստների պատերազմը Զինաս-
տանի դեմ, կարող ե հանգեցնել նույն ար-
դյունքների:

«Յերրորդները կարծում են, վոր պատե-
րազմը պետք ե կազմակերպի «բարձր ցեղը»

(paca), ասենք՝ կերմանական «ցեղը» ընդ-
դեմ «ցածր ցեղի», ամենից առաջ-ընդդեմ
սլավոնների...»: Բնիլ. Ստալինը հենվում ե
պատմական այն որինակի վրա, յերբ հին
Հռոմեական կայսրությունը նայում եր այժ-
ման գերմանացիների ու ֆրանսիացիների
նախնիների վրա, վորպես «ցածր ցեղի»:
Սակայն «բարբարուները» միացան և խոր-
տակեցին Հռոմը: «Վարչն ե այն յերաշխիքը,
վոր փաշիստական» զրական քաղաքագետ-
ների բախտը նեռլինում ավելի կրանի, քան
Հռոմի հին ու փորձված նվաճողներինը Հռո-
մում: Արդյոք պելի ճիշտ չի լինի յենթա-
գրել հակառակը:

Վերջապես, չորրորդները կարծում են, վոր
պատերազմը հարկավոր ե կազմակերպել
ԽՍՀՄ-ի գեմ... Հազիվ թե կարելի յի կաս-
կածի վոր յերկորդ պատերազմը ԽՍՀՄ-ի
գեմ կհանգեցնի հարձակվողների կատարյալ
պարտության, հեղափոխության՝ Յեկը-
պայի ու Սալայի մի շարք յերկրներում և
այդ յերկրների բուրժուատ կալվածատիրա-
կան կառավարությունների ջախջախման»:

Փայլուն ձեռվ գործադրելով մարքս-լե-
նինյան դիակեկտիկան, մեր կուսակցու-

թյան առաջնորդ ընկ. Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում արած իր ղեկուցման մեջ քայլ առ քայլ լուսաբանում և միջազգային պարագայի ժամանակակից բարդ հանգույցը, ճգնաժամի շարժումը, սրված քաղաքական դրության պատկերը կապիտալիստական յերկրներում, մերկացնում և իմպերիալիստների պլանները, վորոնք պատրաստվում են կազմակերպել նոր պատերազմ:

Յեկ ճիշտ ե ասում էենինզրադի չոկտեմբերյան գործարանի բանվոր ընկ. Սոլովյովը, վոր ընկ. Ստալինի զեկուցման մեջ ցյերկրի կորովը, կուսակցության հզորությունը, կոմունիզմի համաշխարհային հաղթանակները դգացվում են յուրաքանչյուր բառում: Այդ պատճառով ել այդպիսի ուժ կա նրանց մեջ:

Կուսակցության համագումարում բոլոր յելույթները հատուկ ուշադրություն են դարձնում աշխարհի ամենառեակցիոն կառավարությունների քաղաքականության վրա, ճապոնական ու գերմանական իմպերիալիստների քաղաքականության վրա: Այսորվա Ճապոնիան ու Գերմանիան համաշխար-

հային ուսակցիայի հարվածային բոունցքն են: Յեկ յեթե Ճապոնիան արդեն դարձել ե ժանգարմ Հեռավոր Արևելքում, ապա Փաշիստական Գերմանիան կամենում ե դառնալ կապիտալիստական կարգի ժանդարմը Յելրոպայում: Յեկ Ճապոնիայում, և՝ Գերմանիայում իշխող կուսակցությունները հանդես են գալիս, վորպիս նոր արշավների կազմակերպիչներ համաշխարհային բոլշևիզմի դեմ: Այդ յերկու յերկրություններում ել ճգնաժամից յելք են պինարում ԽՍՀՄ-ի գեմ նոր պատերազմի հաշվին:

Վերջին յերկու տարվա ընթացքում Ճապոնիայում չափաղանց շատ են դրել ու գործնականապիս քննարկել Ճապոնիայի պատերազմի մանրամասնությունները ԽՍՀՄ դեմ, մեր Պրիմորյեի, Զաբայկալի և մինչեւ իսկ ամբողջ Սիբիրի գրավման ուղիները: Ճապոնացիները գրավեցին Հյուսիսային Զինաստանը և այժմ հարված են պատրաստում Մոնղոլական ժողովրդական հանրապետության դեմ, դարձնելով Մանջուրիան պլացղարմ ԽՍՀՄ-ի գեմ պատերազմի համար: Ճապոնական ռազմական զինանոցներն այժմ աշխատում են որ ու կիշեր:

Բանակում արգելված են արձակուրդները:
 Մի շաբթ մասնավոր խոշոր գործարաններ
 վերակառուցված են ու հարմարեցված ռազ-
 մական պատվերներ կատարելու համար:
 Ճապոնիան ամբողջ ժամանակ Յեվրոպյան ուժեղ կերպով գնում ե զենք, բեռնավորում իր,
 թունավոր զաղեր և այլն: Հսկայական գու-
 մարներ են ծախսվում ռազմական կարիք-
 ների և մանավանդ ռազմական նավատորմի
 վերակառուցման համար, արտասահմանում
 սպառազինումներ գնելու համար:

Ճապոնիան ուժեղ կերպով և ակտիվորեն
 պատրաստվում է պատերազմի ճապոնիայի
 պատերազմի պատրաստություններն ընթա-
 նում են ռազմա- և նետաշկան բազու պատրաս-
 տելու գծով, դինված ուժերի վերակազմակերպ-
 ման, վերագինման ու բանակական ուժեղաց-
 ման գծով և վերջապես՝ Մանչուրիայում
 պլազմարմ պատրաստելու գծով» (17-րդ համա-
 գումարում ընկ. Կորոշիլովի արած յելույթից):

Ճապոնիայի պաշտոնական սուվորական
 բյուջեն ավելացել է՝ 1930 թվի 443 մի-
 լիոն իննից՝ հասնելով 1934 թվին 937
 միլիոն իհնի, այսինքն՝ սպառազինման վրա
 ծախսվում է պետական ամբողջ բյուջեի
 44 1/2 տոկոսը: Բուռն տեմպերով առաջ է

գնում ռազմական արդյունաբերության դար-
 պացումը: Կառուցվում են գործարաններ
 տանկերի, սավառնակների արտադրության
 համար: Միաժամանակ վերազինվում և ուժի-
 զացվում են ճապոնիայի ցամաքային ու
 ծովային ուժերը:

Ճապոնիան տենգագին կառուցում է Ման-
 ջուրիայում նոր յերկաթուղիներ: Ընդամենը
 կառուցված ե մինչեւ 1000 կիլոմետր յեր-
 կաթուղի: Կառուցման մեջ և գտնվում մոտ
 600 կիլոմետր: Այդ յերկաթուղիների ուղ-
 ղությունը հնարավորություն և տալիս բա-
 վականաչափ արագ տեմպով դինված ուժերի
 վերախմբավորում կատարել ցանկացած ուղ-
 ղություններով: Բացի յերկաթուղիներից,
 ճապոնացիներն այս յերկու տարվա ընթաց-
 քում կառուցել են մինչեւ 2200 կիլոմետր
 գետնուղիներ (грунтowych дорог): Այդ ճանա-
 պարհները տնցնում են առավելագեց Ներ-
 քին Մոնղոլիայից գեղի մեր սահմանամերձ
 կետերը, այն ուղղություններով, վորոնք
 ձեռնաու յեն գալիք ստրատեգիական բա-
 ցազաման համար:

Հյուսիսային Չենաստանում ճապոնացիք
 կառուցել են առաջնահարություններում և ավիա-

49622-65
 (35099)
 1008)



ցիոն բազա: Այդ բոլոր կառուցումները համախմբված են Մուկդենի, Խարբինի, Ցիցիկարի ու յոյնում Բնական ե, վոր այդ ավելացիոն շինարարությունն ուղղված է իր սուր ծայլով մեր դեմ: Յեթե ոկուպացիայից առաջ Մանչուրիայում հաշվվում եր մոտ 10 հազար ճամփոնական զինվոր Հյուսիսային Չինաստանում, ապա այժմ այստեղ կա 130 հազար զինվոր, այսինքն՝ այնտեղ ե գտնվում ամբողջ ճամփոնական բանակի մի յիշրորդից ավելին: Դրան պետք է ավելացնել Մանչժոու-Գոյի բանակը, վորն ունի 115 հազար հոգի և մոտ 12 հազար սպիտակ գվարդիական-ներին, վորոնք ընդունակ են զենք կրելու, և վորոնցից ճամփոնացիները կազմակերպում են հատուկ ջոկատներ: Ռազմական նավատորմը Սունգարի գետի վրա ուժեղացված է 24 միավորով: Ողային նավատորմի հազար մի մեջ ճամփոնացիներն ունեն Մանչուրիայում 500 սավառնակ: Ճամփոնական բանակը Մանչուրիայում ունի 100 տանկ, 600 ից ավելի հրանոթներ, 500 հազար արկ, 5 միլիոն փամփուշտ: Ճամփոնիայից դեպի Մանչուրիա մարտի տեխնիկական միջոցների փոխադրման մասշտաբները հրեցնում են իս-

կական մորիլիզացիան մեծ ու լարված պատերազմի համար: Ճապոնիան ուժեղ կերպով պատրաստվում ե մեծ պատերազմ մղելու:

Դեռևս քաղաքացիական պատերազմի ժամանակ, 1918 թվի մայիսի սկզբներին, յերբ դաշնակիցներն սկսեցին ուժեղացնել իրենց զորքերը հյուսիսում ու արևելքում, յերբ Գերմանիան տակավին ջախջախված չեր, յերբ Ճապոնիան իր զորքերն ափ իջեցրեց Վլադիկոստոկում, Լենինը նախազգուշացնում եր կուսակցությանն ու բանվոր դասակարգին այս մասին, վոր «Հնարավոր ե և մինչև իսկ հավանական ե, վոր Գերմանիան Ճապոնիայի հետ միասին ձևական կամ լուսայն համաձայնությամբ կսկսեն բաժանել ու խեղղել մեդ» (Լենին, հատ. 22-րդ):

Ինչպես և 16 տարի սրանից առաջ, «Ճապոնիայի ռազմամուկները (Յօնիպինա) մրցականչի յեն հրավիրում Փաշխատներին ու անդլիական իմպերիալիստներին հականեղափակական պատերազմ սկսելու ԽՍՀՄ.ի դեմ և արևելքից, և արևմուտքից: Վարելով անընդհատ պրովոկացիաների քաղաքականություն ԽՍՀՄ.-ի դեմ, մտադրվելով գրավիլ խորհրդային հողերը, Ճապոնիայի փաշխատական ռազմամուկները հանդես են գալիս, վորպես

Խորհուրդների յերկրի գեմ հակածեղափոխական պատերազմի նախաձեռնողները: Միենույն ժամանակ գերմանական ֆաշիզմը կոչեանում միջազգային բուրժուազիային գնել ազգային-սոցիալիստական լանդսկնեխրին ԽՍՀՄ գեմ, բնակչելով անզիւտական, իտալական ու լինական բնակչերիալիզմի հետ (գերման-լինական բանակցություններ): Անդվիսկան իմպերիալիստաները ներկայումն փոխարինել են քրանսական իմպերիալիստաներին, վորպես հակախորհրդային պատերազմի գլուխագործակերպիչներ» (Կոմինտերնի Գործկումի 13-րդ պլենումի վորոշումներից):

Հիտլերն իր «Իմ պայքարը» գրքում դրում է. «Գերմանիայի համար խելացի հոգային քաղաքականություն վարելու միակ հնարակ վորությունը միայն նոր հողեր ձեռք բերելն ե հենց Յելլոպալայում... իսկ Յելլոպալայում հողեր ձեռք բերելը կարող եք տեղի ունենալ ընդհանրապես և ամբողջովին միայն ի հաշիվ Ռուսաստանի, միայն յերբեմնի Տետոնական միաբանության ասպետների ուղիներով կայսրության արշավով, վորպես-

* Լանգսկնեխրաներ—գերմանական վարձու գործերն ենին 17-րդ դարում:

դի գերմանական սրով ձեռք բերվի գերմանական գութանի համար հող, իսկ ազգության համար՝ ամենորյա հաց»: Նույն այդ մասին Լոնդոնի տնտեսական կոնֆերանսում խոսեց Հուգենբերգն իր հուշագրում, պահանջելով Խորհրդային Ռւկաբնան, վորպես գաղութ Գերմանիայի համար: Գերմանիան ներկայումս ուժեղ կերպով պատրաստում և սպառագինում, և լարելով յերկրի բոլոր տնտեսական հնարավորությունները, պատերազմի պատրաստություն և տեսնում: Մըշտական բանակի թվական քանակը Գերմանիայում ավելացված ե յերկու անգամ: Ներկայումս Գերմանիան ունի կիսմիլիոնանոց վարժեցրած բանակ: Հրետանական հրանոթների, սավանակների, տանկերի և ռազմական այլ տեխնիկայի արտադրությունն արագացվում և ծայրահեղ չափերով: Ամբացվում է Գերմանիայի արեելյան սահմանը:

1918 թ. գետարվարի սկզբին Լենինն առում եր.

«Նրանք միայն մի միտք ունեն. չինչիք թէ մեր հրդեհի կայծերն ընկնեն նրանց կտուրների վրա: Սակայն չինական պարըստ պով չես անջատվի Ռուսաստանից: Զատ

աշխարհում բանվորական վորեե կազմակերպություն, վորտեղ խանդավագառությամբ չընդունվեն մեր գեկրեաները հողի մասին, բանկերի ազգայնացման մասին և այլն» (Լենին, հատ. 22).

«Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային նշանակությունը, —ասում են ընկ. Ստալինը, —վոչ միայն այն ե, վոր նամի յերկրի մեծ նախաձեռնությունն ե իմ պերիալիդմի սիստեմի հեղքվածք առաջնելու գործում և սոցիալիզմի առաջին ոջախն ե իմպերիալիստական յերկրների ովկիանոսում, այլև այն, վոր նա կողմում ե համաշխարհային հեղափոխության առաջին ետապը և հզոր բազան նրա հետադաժավական համար» (Ստալին, «Լենինիդմի հարցերը». եջ 146),

Ցեղ այժմ, յերբ գործն ակնհայտ կերպով դնում ե դեպի պատերազմ, յերբ ճգնաժամից յելք վորոնիլիս իմպերիալիստական ավազակները կանգնում են հակասությունները զենքով լուծենու ճանապարհի վրա, յերբ մեր դեմ զենք են սրում և արևելքից, և արևմուտից, մենք ավելի քան յերեւն պետք ե հիշենք Լենինի ավանդը՝ «Զգոն

յեղեք, պահպանեցեք մեր յերկրի ու Կարմիր բանակի պաշտպանունակությունը աչքի լույսի պես, և հիշեցեք, վոր մենք իրավունք չունենք վոչ մի վայրկյան թույլտարու մեր բանվորների ու գյուղացիների և նրանց նվաճումների թույլացում» (Լենին, հատ. 24-րդ):

10 տարի առաջ ընկ. Ստալինը, այն որը, յերբ մեղանից հեռացավ Լենինը, ասաց. «Ենինը մեզ քանիցս ասել ե, վոր այն գաղարը, վոր մենք նվաճել ենք կապիտալիստական յերկրներից, կարող ե կարճատել լինել Լենինը քանիցս ցույց ե տվել մեզ, վոր Կարմիր բանակի ամրացումը և նրա դրության բարեկավումը հանդիսանում ե մեր կուսակցության կարեռագույն խընդիրներից մնելը՝ Անցքերը՝ կապված Քերպոնի վերջնապրի ու Գերմանիայի գննաժամի հետ, մի անգամ ևս հաստատեցին, վոր իրավացի յեր Լենինը, ինչպես և միշտ Ուրեմն յերդվենք, ընկերներ, վոր մենք ուժ չենք խնայի ամրացնելու համար մեր կարմիր բանակը, մեր Կարմիր նավատորմը՝ Վորովիս վիթխարի ժայռ կանգնած ե մեր յերկիրը՝ շրջապատված բուրժուական պե-

տությունների ովկիանոսով, Ալիք-ալիքի
հետեից զլորվում են նրա վրա, սպառնալով
ջրի տակ առնել ու սրբել այն, իսկ ժայռը
կանգուն է ու անհողդող, ինչումն է նրա
ուժը, վոչ միայն նրանում, վոր մեր յերկի-
րը կանգուն է բանվորների ու գյուղացի-
ների գաշինքով, վոր նաև մարմարացնում է
աղատ աղգությունների գաշինքը, վոր նրան
պաշտպանում է Կարմիր բանակի ու Կար-
միր նավարորմի հզոր ձերքը Մեր յերկի-
ուժը, նրա ամրությունը նրանումն է, վոր
նաև ունի խոր համակրանք և անխորտակե-
լի աջակցություն ամբողջ աշխարհի բան-
վորների ու գյուղացիների սրտերում, Ամ-
բողջ աշխարհի բանվորներն ու գյուղացի-
ները կամենում են պահպանել Խորհուրդ-
ների հանրապետությունը, վորպես մի նետ,
վորը նետված է Լենինի հաստատուն ձեռ-
քով թշնամիների բանակի մեջ, վորպես
իրենց հույսերի հենարան՝ աղատվելու հա-
մար ճնշումից ու շահագործումից, վորպես
մի համատարիմ փարոս, վորը ցույց է տա-
լիս նըանց աղատազրման ուղին Նըանք
կամենում են նրան պահպանել և թույլ
չեն տա կալվածատերերին ու կապիտա-

լիստներին ավերելու այն, Դրանումն է
մեր ուժը, զբանումն է բոլոր յերկրների
աշխատավորների ուժը: Յեկ հենց զբանումն
է ամբողջ աշխարհի բուրժուազիայի
թուլությունը» (Ստալին. Խորհուրդների
շրդ համագումարում ունեցած յելույթից):
Կուսակցության 17-րդ համագումարը բա-
ցառիկ նշանակություն ունի միջազգային
բանվորական շարժման ամբողջ պատմու-
թյան համար: Էնկ. Ստալինի զեկուցումը
դարձավ համագումարի վորոշում, դարձավ
սրենք կուսակցության համար, վորոշեց
Խորհրդային Միության զարդացման հե-
տագա ուղիները և մեծ չափով վորոշեց
յերկրագնդի բախտը: Կուսակցության 17-րդ
համագումարի վորոշումները ներկայումս
գտնում են հեղափոխական պայքարի
գրոշ տասնյակ ու հարյուրավոր միլիոննե-
րի համար, դառնում են հեղափոխական
նոր քաջագործությունների վոգերության
աղբյուր:

Բանվոր դասակարգը բոլեմիկների զեկա-
կարությամբ, կուսակցության սիրելի առաջ-
նորդ, համաշխարհային պլրութարիատի
առաջնորդ լնկ. Ստալինի զեկագործությամբ

համագումար յեկավ համաշխարհային պատմական հաղթանակներով։ Մեր յերկրում հաղթանակեց սոցիալիզմը։ Սոցիալիստական ձևն անվերապահորեն իշխում ե յերկրի ամբողջ եկոնոմիկայում։

Յեկ այն ժամանակ, յերբ կապիտալիստական ամբողջ աշխարհի համար այդ տարիները յեղել են համաշխարհային խորացող տնտեսական ճգնաժամի տարիներ, թէ կապիտալիստական յերկրների միջն հարաբերությունների և թէ այդ յերկրների ներսում քաղաքական ու տնտեսական զբության հետագա սրման տարիներ, միանգամայն այլ դրություն և տիրում ԽՍՀՄ-ում։

«Տնտեսական ցնցումների ու ռազմա-քաղաքական կատաստրոֆների այս փոթորկ-վող ալիքների մեջ ԽՍՀՄ կանգնած և առանձին, վորպես մի ժայռ, շարունակելով սոցիալիստական շինարարության իր գործը, խաղաղությունը պահպանելու համար պայքարելու իր գործը։ Յեթե այնտեղ, կապիտալիստական յերկրներում, գենես փոթորկում և տնտեսական ճգնաժամը, ապա ԽՍՀՄ-ում շարունակվում ե վերելքը թէ արդյունաբերության և թէ գյուղատն-

տեսության ասպարեզում։ Յեթե այնտեղ, կապիտալիստական յերկրներում, նոր պատերազմի տենդային պատրաստություն են տեսնում՝ աշխարհի և ազդեցության շրջանների նոր վերաբաժանման համար, ապա ԽՍՀՄ շարունակում ե սիստեմատիկ համառ պայքարն ընդդեմ պատերազմի սպառնալիքի և հանուն խաղաղության, ընդ վորում չի կարելի տսել թե ԽՍՀՄ ջանքերն այս բնագավառում վոչ մի հաջողություն չին ունեցել» (Ատային)։

Չսայած մեղ պատերազմի մեջ քաշելու նկատմամբ համաշխարհային իմպերիալիզմի փորձերին, չնայած նրան, վոր այդ փորձերը բազմաթիվ ելին («արդյունաբերական կուսակցության»)։ Հականեղափախական գործունեյությունը, մահափորձերը արտասահմանում մեր ներկայացուցիչների վրա, գերմանական դեսպանի գեմ մահափորձը Մուկվայում, գրանսական պրեզիդենտի սպանությունը Գորգուլովի ձեռքով, պրովոկացին յելույթները Հեռավոր Արևելքում (և այլն), մեր կառավարությունն ու կուսակցությունն անելղօրենն ու հետևողականութեն, բոլովիլյան ամենայն համառույթամբ վարել են խաղաղության բաղականությունը։

Այս տարիներում չհարձակման պակտեր
են կնքված մեր հարևանների միջամաս-
նության հետ, բացառությամբ ձապոնիա-
յի: Մեզ հետ սահմանակից բոլոր յերկըր-
ների հետ,—Ֆինլանդիայից մինչև Աղվա-
նըստան ու վոքր Անտանտի յերկըների
հետ կնքված ե հարձակվող կողմը վո-
րոշելու համաձայնություն: Դիվանագիտա-
կան նորմալ հարաբերությունների վերա-
կանդնումը Միացյալ Նահանգների հետ,
փոխհարաբերությունների նշանակալից բա-
րելավումը Թրանսիայի, Իտալիայի, Լեհաս-
տանի հետ, առևտրական նոր պայմանա-
գրերի կնքումն Անդիայի հետ,—այս բոլո-
րը կենդանի վկայություն են հանդիսա-
նում մեր կողմից անշեղ ու հետևողական
կերպով կիրառվող խաղաղության քաղա-
քականության: Մեր հարաբերությունները
Թյուրքական հանրապետության հետ տարեց
տարի բարելավվում են և կարող են
որինակ հանդիսանալ մյուս պետություն-
ների հարաբերությունների համար: Մեր
կառավարության կողմից պատվիրակու-
թյուն ուղարկելը,—ուսպմածովային ժող-
կոմ ընկ: Վորոշիլովի վկայորությամբ,—

Թյուրքական հանրապետության տասնուամ-
յու կի տոնակատարությունը և Թյուրքիալի
կողմից պատվիրականությանը ցույց տված
խանդավառ ընդունելությունը այդ բարե-
կամության վկայությունն են հանդիսա-
նում:

Մի շարք կապիտալիստական յերկըների
հետ փոխհարաբերությունների բարելավու-
մը բացատրվում ե ամենից առաջ և ԱՀՄ
ուժի ու հզորության աճումով: «Մեր ժա-
մանակներում ընդունված չե թույլին հաշ-
վի առնել, —հաշվի յեն առնում միայն ու-
ժեղներին» (Ստալին):

Մեր յերկիրը տեխնիկական, տնտեսա-
կան տեսակետից զարձավ առաջավոր յեր-
կըներից մեկը: Մեր յերկըրում առահոված
ե սոցիալիզմի հաղթանակը: Մենք կարող
ենք առանց զրոից վորեե մեկի ոգնության
մեր նյութերով, մեր բանվորների ձեռքով
արտադրել ամեն տեսակ մեքենա, վորոն
ապահովամ և մեր տնտեսական անկա-
խությունը: Մեր յերկիրն ունի ուժեղ
կույրի ժամանակակից միջոցներով սպառ-
դինված կարմիր բանակ:

«Խաղաղության քաղաքականությունը

մենք վարելու յենք առաջիկայում ևս բոլոր ուժերով ու բոլոր միջոցներով։ Վոչ մի թիզ ուրիշի հողից մենք չենք ուզում, բայց և մեր հողը, վոչ մի վերջոկ մեր հողից մենք չենք տա վոչ վոքի» (Կուսակցության 16-րդ համագումարում ընկ. Ստալինի արած զեկուցումից):

ԳՐՈՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ Ե

ՄԱՍՍԱՆԵՐԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Խոսելով Հոկտեմբերյան հեղափոխության արտաքին ու ներքին պարագայի մասին, 1917 թ. Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակների պայմանների մասին, ընկ. Ստալինը մատնանշում է.

«Առաջին՝ այն հանգամանքը, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը սկսվեց իմպերիալիստական յերկու հիմնական՝ անդարձնական ու ավտորուգերմանական խմբակների կատաղի կռվի շրջանում, յերբ այս խմբակները՝ զբաղված լինելով իրարհանացու կոփվ մղելով, վճռ ժամանակ, վճռ ել միջոցներ ունեցին լուրջ ուշադրություն դաբճնելու Հոկտեմբերյան հեղափոխության դեմ մղվող պայքարի վրա։ Այս

հանգամանքն ահազին նշանակություն ոււ
նեցավ Հոկտեմբերյան հեղափոխության
համար, վորովհետև նա հնարավորություն
ավեց որոտարործելու իմաստերիալիզմի ներ-
սում տեղի ունեցող դաժան ընդհարում-
ները՝ իր ուժերն ամրապնդելու և կազմա-
կերպելու համար:

Յերկրարդ՝ այս հանգամանքը, վոր Հոկ-
տեմբերյան հեղափոխությունն սկսվեց իմ-
պերիալիստական պատերազմի ընթացքում,
յիրք պատերազմից հոգնած ու խաղաղու-
թյան ձարավի աշխատավոր մասսաներին
հեց ինքն իրերի տրամաբանությունը մո-
տեցրել եր պրոլետարտկան հեղափոխու-
թյանը, վորակո միակ յելքի պատերազ-
մից: Այս հանգամանքը ամենալուրջ նշանա-
կություն ունեցավ Հոկտեմբերյան հեղափո-
խության համար, վորովհետև դա նրա ձեռ-
քը ավեց խաղաղության հզոր զործիքը, հեշ-
տացրեց նրա համար խորհրդային հեղա-
շրջումն ատելի պատերազմի վախճանի հետ
կապելու հնարավորությունը և դրա հետե-
քանքով մասսայական համակրություն
ստեղծեց նրա համար թե Արևմուտքում
բանվորների մեջ և թե Արևելքում ձնշված
ժողովուրդների մեջ:

Յերրորդ՝ հզոր բանվորական շարժման
առկայությունը Յեղուպայում և իմպերիա-
լիստական յեղկարատև պատելազմի ստեղ-
ծած հեղափոխական ձնաժամկի հասունաց-
ման վիաստն Արևմուտքում և Արևելքում:
Այս հանգամանքն անդնահատելի նշանա-
կություն ունեցավ Բուռաստանում հեղա-
փոխության համար, վորովհետև դա ապա-
հովեց նրա հսմար հավատարիմ դաշնակից-
ներ Բուռաստանից զուբս՝ նրա պայքա-
րում ընդդեմ համաշխարհային իմպերիա-
լիզմի (Ստալին, «Լենինիզմի հարցերը»,
էջ 109—110):

Յելայդ պատճառով համաշխարհային մի-
պերիալիզմի միացյալ ուժերի զինված ին-
տերվենցիան, «14 պետությունների հար-
ձակումը», չկարողացավ խլել հաղթանակը
Խորհրդային հանրապետության բանվոր դա-
սակարգի ձեռքից, չկարողացավ արյան
մեջ խեղդել բանվոր դասակարգի Հոկտեմ-
բերյան հաղթանակը: Ինտերվենաները
պարտվեցին ուսւական սպիտակ-գվարդիա-
կանության հնտ միասներ:

«Այդ կարող եր պատահել և պատահեց
այս պատճառով, վոր մեր կողմն եր բոլոր

կոտպիտալիստոկան յերկըների պլողիտաշըիտը...մինչև իսկ այն գեղքերում, յերբ նա ակնհայտ կերպով գտնվում էր մենցեվիկների ու եսերների,—Յեփրոպայի յերկըրներում նրանք այլ կերպ են կոչվում,— ազգեցության տակ, բայց և այնպես նրանք չողնեցին մեր գեմ մղած պայքարին: Վերջիվերջո պարագլուխների կողմից մասսաներին արած հարկադրական զիջումներում այդ պատերազմը ձախողեցին... նրանք մեր գեմ մղած պատերազմը ձախողեցին պատսիվ ու իլիսապասիվ դիմադրությամբ: Այդ անվիճելի փաստը պատասխանում և այն հարցին, թե վորտեկ կարող եր ռուսական պրոլետարիատը բարոյական ուժ քաղել յերեք և կես տարբի դիմանալու և հաղթելու համար»: (Լենին, հատ. 26):

Մենք հաղթեցինք շնորհիվ մեր կուռակշության հաստատուն լենինյան զեկավարության: Մենք հաղթեցինք, վորովհետեւ քաղաքացիական պատերազմը մեր յերկըի դեմ, ինչպես քանից նշել ե Լենինը, պրոլետարական հեղափոխության քաղաքականությունը համախմբեց

բոլշևիկմի զբոշների տակ մեր յերկըի աշխատավորներին և ոգնություն գտավ ամբողջ աշխարհի աշխատավորների կողմից:

Հասունացող հեղափոխության սպառնալիքի տակ դրված կապիտալիստական աշխարհը, յելք վնարելով ճգնաժամմից, զիմուս և հին փորձին՝ լուծել իր հակասություններն ի հաշիվ ԽՍՀՄ, ինտերվենցիոն ճանապարհով, սոցիալիզմի յերկըի դեմ:

Լենինը քանիցս մատնանշել և մեզ վոր շքանի մենք շատ ենք հաղթում, այնքան ավելի կապիտալիստական շահագործողները վարժվում են համախմբվել և անցնել ավելի վճռական հարձակման» (Լենին, կուսակցության 9-րդ համագումարում արտասանած ճառից):

Այժմ, յերբ կապիտալիզմի հիմքերը խախտվում են, շնորհիվ նրա ամենախոր անլուծելի հակասությունների, յերբ համաշխարհային տնտեսական ճգնաժամը, վորն անցնում և կապիտալիզմի ընդհանուր ճշգնաժամի պայմաններում, սրվել ե անտեսական ճգնաժամը հեղափոխական ճգնաժամի վերաճանան աստիճանի, բուրժուազիան կրկին ուղում և հետաձգել կապիտալիզմի

վախճանը վոճրագործ իմպերիալիստական
պատերազմով և հաղթականորեն սոցիա-
լիզմ կառուցող յերկրի դիմ հականեղափո-
խական արշավ գործելով: Կոմինտերնի
Գործկոմի 13-րդ պլենումն արձանագրեց,
վոր աշխարհն ընդհուպ մոտենում և հեղա-
փոխությունների ու պատերազմների նոր
տուրին:

Եերջին յերեք տարում տեղի ունեցավ
չինական հեղափոխության հետագա զար-
գացումը, չինական խորհուրդների նոր
հաջողությունների, չինական կարմիր բա-
նակի նոր հաղթանակների կուտակում:
Այդ ժամանակամիջոցում հսպանիան թեա-
կոլիսեց հեղափոխության ուղին, վորը բուր-
ժուական հեղափոխությունից վերաճում և
պրոլետարական հեղափոխության:

Բուրժուազիան չտեսնված տեսողի մի-
ջոցով աշխատում և վոչնչացնել մասսաների
հեղափոխական շարժումը, սակայն նա
զրանով միայն այդ շարժումն ավելի խորն
և քշում և այդպիսով իսկ արագացնում և
հեղափոխական ձգնաժամի հասունացումը:
Ավելի ու ավելի հաճախ շանսպասելիորեն»
ու «հանկարծակի» մերթ մեկ, մերթ մի այլ

յերկրում թնդում են հեղափոխական պայ-
թյուններ և այդ բնորոշ և այժմյան ամբողջ
պարագայի համար: Այդ չի նշանակում, վոր
հեղափոխությունը կա ինքն իրեն, վոր
պետք չե այն պատրաստել Յուրաքանչյուր
պրոլետարական հեղափոխական կէիշի հա-
մաշխարհային պրոլետարիատի առաջնորդ
ընկ: Ստալինի խոսքերը կուսակցության
17-րդ համագումարում, թե «հեղափոխու-
թյան հաղթանակն ինքն իրեն չի գալիս:
Այն պետք և պատրաստել ու նվաճել»:

Նախագաղատրաստել ու նվաճել հեղափո-
խությունը կարող ե միայն ուժեղ կոմու-
նիստական կուսակցությունը, վորն իր հե-
տեից կտանի բանվոր գասակարգի մեծա-
մտանությունը: Զինաստանի, ձապոնիայի,
Գերմանիայի կոմկուսակցությունները ցույց
են տալիս հերոսության բացառիկ որի-
նակներ՝ պրոլետարական հեղափոխության
հաղթանակի համար, պրոլետարական դիկ-
տատուրայի հաստաման համար մզած պայ-
քարում:

«Թող փորձի բուրժուազիան այսոր կա-
պիտալիստական յերկըներում զինել մաս-
սաներին այնպես, ինչպես նա զինեց նրանց

համաշխարհային իմպերիալիստական պատերազմի վերջում,—այն ժամանակնա կհասկանա, թե ինչ են նշանակում կապիտալիզմի ճակատագրի համար դինված ժողովուրդները, և ինչպես են զինված ժողովուրդներն արագացնում հեղափոխական ճգնաժամը» (Մանուկյան):

Յեվ յեթե զլուխները կորցրած իմպերիալիստական գիշտիչները կփորձեն Խորհուրդների յերկրի դեմ շարժել իրենց բանակները, «հազիվ թե կարելի յեն կասկածել վոր այդ պատերազմը կլինի ամենավտանգավոր պատերազմը բուրժուազիայի համար: Այդ կլինի ամենավտանգավորը վոչ միայն այն պատճառով, վոր ԽՍՀՄ-ի ժողովուրդները մահու կոիվ կմղեն հեղափոխության նվաճումների համար: Այդ ամենավտանգավորը կլինի բուրժուազիայի համար նաև այն պատճառով, վոր պատերազմը տեղի կունենա վոչ միայն ճակատներում, այլև հակառակորդի թիկունքում: Բուրժուազիան կարող ե չկասկածել, վոր ԽՍՀՄ բանվոր դասակարգի բաղմաթիվ բարեկամները Յեվրոպայում և Ասիայում կաշխատեն թիկունքից հարվածել իրենց ճնշողներին, վորոնք

վաճառզործ պատերազմ են նյութել բոլոր յերկրների բանվոր դասակարգի հայրենիքի դեմ: Յեվ թող մեղնից չդժգոհեն պարունայք բուրժուաները, յեթե այդպիսի պատերազմի մյուս որն իրենց շարքերից պակասած գտնեն նիրեայումն առածծու վողորմությամբ» բարեհաջող կերպով թագավորող՝ իրենց մոտիկ կառավարություններից մի քանիսին... Հաղիվ թե կարելի յեն կասկածել վոր յերկրորդ պատերազմը ԽՍՀՄ դեմ կհանդիցնի հարձակվողների կատարյալ պարագայության, նեղափառության՝ Յեվրոպայի և Ասիայի մի շաբք յերկրներում և այդ յերկրների բուրժուազիակալվածատիրական կառավարությունների ջախջախման» (Մանուկյան):

Պատերազմը ԽՍՀՄ դեմ, վոր պատրաստում են անդլիսկան ոնդաճակատները, գերմանական ֆաշիստները, ճապոնական ռազմամուլիները, միջազգային թատերաբեմում կլինի շարունակությունն այն քաղաքացիական պատերազմի, վորը բոլոր կապիտալիստական յերկրների բուրժուազիան նիրեայումն մղում և իր բանվորների դեմ: Ճապոնական իմպերիալիզմը պատրաստ

վում և հարձակվելու մեր յԵրկրի դեմ Սքառելքից: Այդ կենսի ամենառեակցիոն խմանը ըիալիստոկան պետություններից մեկի պատերազմն ընդում համաշխարհային պլոտիւարական հեղափոխության հենարանի: Այդպիսի պատերազմը չի կարող շարժման մեջ չընել պլոտիւարական հեղափոխության բոլոր ուժերին:

Այդպիսի պատերազմ մզելու համար հարկավոր և ունենալ ամուռ թիկունք: Զնայած ճապոնական ռազմամոլիների ջանքերին, վորոնք հրահրում են ցեղային շովինիզմը, այնուամենայնիվ վոստիկանությունը 1929 թվից ձերբակալեց 30 հազար հոգու շվանդավոր մտքերի համար: Ճապոնական կոմկուսակցության անհետալ «Մեկկի» թերթը լույս է տեսնում յուբաքանչյուր հինգ որը մեկ և ունի 60 հազար որինակ տիրաժ: Կոմունիստական շարժումը թափանցում է ողաշվական բարձրագույն դպրոցը, Տոկոյի ուսանողների նշանակալից մասնիքնեց կոմունիստներ են համարում, ոյուղացիական շարժումով ընդունվուծ են ճապոնական մի շարք գավառներ: Ճապոնական բանակի մի շարք դորամասերում յեղան-

պինվորական բունածեր և տեղի յեն ունեցել կոմունիստների ձերբակալությունները 1933 թվի ապրիլին Տոյամա գնդում 50 զինվոր հարձակվեցին սպայի վրա կուրո նավակայանում 11 նավաստի ձերբակալվեցին կոմունիստական քիջ կազմակերպելու համար: Զինվորների մեջ շվանդավոր մտքերից առնչությամբ Զապեյից հետ են ուղարկվել ծագոնիա 600 զինվոր Հաճախ զինվորներին Մանջուրիա ճանապարհելը քաղաքական ցույցերի բնույթ և սուանում: Այս բուրութին պետք է ավելացնել և այն, վոր Զինաստանի հյուսիսում տեղակորված ճապոնական զորքերի թիկունքում՝ գտնվում է խորհրդային Զինաստանի 350-հազարանոց կազմիր բանակը, վորը զինավորվում է կոմկուսակցության կողմից, և վորն արդեն իսկ կոիվ է մզում իմպերիալիստների ու նրանց սպասարկունեցի՝ չինական միլիտարիստների դիմ:

Պարզ է, վոր ակնհայտ և այդպիսի պատերազմի վախճանը: Այդպիսի պատերազմը կարող է լիակատար պարտություն բերել խորհրդային սահմանների վրա հարձակվողների համար, կարող է հաղթանակ բերել հեղափոխությանն Ասիայում:

Ուժեղ կերպով աճել և այս ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցության աղքակցությունը Զինաստանում: Զինական կոմկուսակցությունն իր շարքերում ներկայումս ունի 416 հազար հոգի: Զինական խորհուրդներն ընդգրկում են 700 հազար քառակուսի կիւտմետր տարածությամբ տեսրիտորիա: Զինական Կարմիր բանակի շարքերում գտնվում են ավելի քան 350 հազար հոգի, մոտ 600 հազար պարտիզան: Կարմիր բանակի հիմնական զորամասերում մինչև 60%՝ կումունիստներ են, մինչև 30%՝ բանվորներ: Կարմիր բանակի բոլոր զորամասերն ու մասսայական սպառազինված կազմակերպությունները յինթարկվում են միասնական կենտրոնական ղեկավարությանը հանձնն Հեղափոխական Ռազմական Խորհրդի ընկ. Չուղեյի գլխավորությամբ: Այդ Կարմիր բանակը մինչև իսկ նրա թշնամիների խոստովանությամբ լավագույն բանակն ե Զինաստանում: 1930 թվի նոյեմբերից գոմինդանականները Զինաստանում խորհուրդների դեմ կազմակերպեցին 6 ուղամական արշավ: Յեվ այդ ուղամական արշավ ների արդյունքը յեղավ միայն այն, վոր

չինական Կարմիր բանակը շարունակ հաղթանակում եր, զրավելով հարուստ ավարներ: Առանձին տվյալների համաձայն նույնապիսին ե նաև 6-րդ արշավի արդյունքը, մի արշավ, վոր չափաղանց խնամքով նախապատրաստում եր արյունաբրու Զանեկայշին: Կարմիր բանակն այդ արշավի ընթացքում գրավելի և ավելի քան 22 հազար հրացան, 180 գնդացեր, 500 մառլեր, 2 հազար շլեմ, 400 հազար փամփուշտ, 5 հազար նոնակ, 3 ուղիուապարատ, 12 միծ շողենավ լիքը ուղղմական հանդերձանքով, մթերքներով ու դրամով: Գերմանական գեներալ Սեկտի ու Զանեկայշին վեցերորդ արշավը վերջացավ խայտառակ պարտությամբ, իսկ Կարմիր բանակի ու չինական խորհուրդների զրությունն ել ավելի ամբացավ:

Զինական Կարմիր բանակի հաղթանակների պատճառն այն ե, վոր նրան ոգնում և սպասարկում ե ամբողջ ընակչությունը, վոր նա զինված և կոմունիզմի ամենահաղթ ուժով: Զինաստանի ամենալայն խավերը խորհուրդների կոնկրետ որինակավ տեսնում են խորհրդադային սիստեմի առավելությունները: Զինական կոմկուսակցությունն իր յետեկց

տանում և բազմամիլիոն մասսաներին: «Այդ
այն կուսակցությունն է և այն իշխանու-
թյունն է, վորին հաղար տարիներ ի վեր
սպասում ելին չինական կուլին ու չինակ-
կան գյուղացին» (Մանուկյան):

Ամուր և կանգնած իր հեղափոխական լե-
նինան դիրքերում Գերմանիայի հերոսական
կոմկուսակցությունը:

«Թաշիզմի հաղթությունը Գերմանիայում
հարկավոր և գիտել վոչ միայն վորպես բան-
վոր դասակարգի թուլության նշան և բան-
վոր դասակարգի նկատմամբ սոցիալ-դեմո-
կրատիայի գործած դավաճանությունների
արդյունք,—սոցիալ-դեմոկրատիայի, վորը ճա-
նապարհ հարթեց ֆաշիզմի համար: Այդ հաղ-
թությունը հարկավոր և դիտել նաև վորպես
բուրժուազիայի թուլության նշան, վորպես
նշան այն բանի, վոր բուրժուազիան արդեն
անկարող և իշխել պարզամենտարիզմի և
բուրժուական դիմոկրատիայի հին մեթոդնե-
րով, վորի համար նա ստիպված և ներքին
քաղաքականության մեջ դիմելու կառավար-
ման տեսորիստական մեթոդների,—վորպես
նշան այն բանի, վոր խաղաղատենչ արտա-
քին քաղաքականության հիման վրա նա

այլևս անկարող և յելք գտնել ներկա դրու-
թյունից, վորի համար նա ստիպված և դի-
մելու պատերազմի քաղաքականության»
(Ասալին):

Յեզ ավելի ու ավելի մեծ աղղիցություն և
տվելի ու ավելի մեծ հաջողություն կայե-
լում Գերմանիայի աշխատավորների կողմից
գերմանական կոմկուսակցությունը, վորը
կազմակերպում և մասսաներին՝ տաղալելու
ֆաշիստական դիկտատուրան, պայքարելու
հանուն խորհրդային Գերմանիայի:

Անում և հեղափոխական ճգնաժամը նաև
մի շարք այլ երկրներում: 1931 թվին բրիտա-
նական նավատորմը հրաժարվեց կատարել
մարտական հրամանը: Այդ գեռ բացահայտ
ապստամբություն չեր: Անգլիական բուրժու-
ազիան ժամանակավորապես ճնշեց շարժումը
նավատօրմում: 1932 թվին լոնդոնում ու
մի շարք այլ քաղաքներում տեղի ունեցան
բազմազար ցույցեր:

Ենաստանում այդ տարիներին լայն ալի-
քով տարածվեց գործադուլային շարժումը:
1931 թ. արևմտյան Ուկրաինան ընդգրկվեց
գյուղացիական ապստամբությամբ: 1932թ.

Կրակովի վոյեվոդստվոն (նահանգը) բոլնկ-
ված եր 100 հազար հոգու ապստամբու-
թյամբ:

1931 թվի ապրիլին տապարվեց միահեծա-
նությունն իսպանիայում և ջախջախվեց
սաղմական դիկտատորական:

1930 թվի նոյեմբերին Հնդկաստանի Փե-
շեվար քաղաքում աեղական հրաձիգները
հրացանները դարձրին անգլիական սպաների
դիմ: Շոլուգար քաղաքը միքանի որ շարու-
նակ գտնվում եր բանվորական միություն-
ների ձեռքում:

1932 և 1933 թ. թ. գյուղացիական ապըս-
տամբություն բոնկվեց Բիրմայում ու Բին-
գալիայում:

1931 թվի սեպտեմբերին Զիլիյում տեղի
յի ունենում սաղմական նավասորմի ապըս-
տամբություն և 1932 թվի հուլիսին Զիլի-
յում ստեղծվում են խորհուրդներ, վորոնք
իշխանությունն իրենց ձեռքում են պահում
11 որ:

1933 թվի ոգոստոսին ծավալվում ե հօ-
կառազմական շարժումը Կուբայում, վորոնք
կերածվում ե ընդհանուր գործադուլի ու հե-
ղափոխության:

Առանձին ապստամբություններում ավե-
լի ու ավելի լայն մասնակցություն են ցույց-
տալիս իմպերիալիստական բանակների զին
վորները: Հայտնի յեն դեպքեր, յերբ ճապո-
նական զինվորներին Մանչուրիայից հայրե-
նիք են ուղարկել: Բուլղարիայում 1933 թվին
մահվան են գատապարտում 50 զինվորի,—
ուազմակոմունիստական կազմակերպության
մասնակցողներին: 1932 թվի նոյեմբերին
Ժնեվի փողոցներում յեղբայրանում են զին-
վորներն ու բանվորները:

1933 թվի փետրվարին Հոլանդիայի խո-
շորագույն սաղմական «Յոթ գավառ» հա-
ծանավը ապստամբություն և կազմակեր-
պում, և հոլանդական կառավարությունը
ստիպված ե լինում ճնշել այդ ապստամբու-
թյունը, ոմբակոծելով ողիք, քանի վոր ապըս-
տամբները վայելում են բոլոր նավաստների
համակրանքը:

1934 թվի փետրվարի 10-ին, այն որե-
րին, յերբ գեր հնչում եյին ճառերը կուսակ-
ցության 17-րդ պատմական համագումաբի
նիստերում, Փարիզի փողոցներն ու հրապա-
րակները զրավում են տասնյակ հազարա-
վոր բանվորներ: Ցույցն ուղեկցվում է վոս-
վոր բանվորներ:

տիկանության հետ տեղի ունեցած դաժան բռնամարտերով։ Կառուցվում են բառիկադշներ։ Բանվորներն իրենց հերոսաբար են պահում, ավելի քան 5 ժամվա ընթացքում, մինչև խոր գիշեր, հետ մղելով վոստիկանների ու ժանդարմանների զբո՞ները։ Փարիզի այդ որը հիշեցնում եր Փարիզյան կոմունայի որերը։ 14 հաղար վոստիկան ու ժանդարմ, իսկ ընդամենը 23 հաղար զորք Փարիզ եյին հավաքել կանխելու համար ցույցերը։ Ցուցարարների շարքերից հնչում եյին ձայներ՝ «կորչեն ֆաշիստները», «կեցցեն խորհուրդները»։ Այդ ցույցերը զլաավորում եյին կոմունիստներն ու կոմյերիտականները։ Կոմունիստների ու կոմյերիտականների, կարմիր արհմիությունների անդամների հետ միասին կովում եյին սոցիալիստ բանվորները, սեփորմիստական արհմիությունների անդամներն ու սոցիալիստական յերիտասարդության կազմակերպությունների անդամները։

Փարիզի պրոլետարիատի հուժկու յելույթը ֆաշիզմի դեմ ողնություն ստացավ զինվորների կողմից։ Զորքերը բացահայտորեն ցուցաբերում եյին իրենց թշնամական վե-

րաբերմունքը դեպի ֆաշիստները, չեյին թագինում բանվորների հետ ունեցած իրենց համերաշխությունը։

«Յուման իտենա նկարագրում կ յեղայրացած մի տեսարան, վոր տեղի յե ունեցել 17-րդ դնդի զինվորների անցնող դասակի և յերկու հաղար բանվորի միջև Բանվորները վողջունում են զինվորներին, բանվորներն ու զինվորները միասին յերգում են «Ինտերնացիոնալ»։

Յելիսեյան դաշտի մոտ, վորտեղ հավաքվել եյին 500 բանվոր, յեկալ 50 զինվորից բակացած մի զորայուն։ Բանվորները շըմ ջապատեցին զինվորներին։ Հնչեց «Ինտերնացիոնալ» յերգը։ Բանվորների ու զինվորների միջև սկսվեց զրույց։ Զինվորներից մեկը հայտնեց, «Մի անհանգստացեք. մենք գիտենք, թէ բանն ինչուն ե»։ Զինվորներն ու բանվորները «Ինտերնացիոնալ» յերգելով հասան Ալմա կամուրջը։ Ճանապարհին նրանց միանում եյին ցուցարարների նորանոր խմբեր, և սյունաշարը հասավ մինչև 1000 հոգու նրա առջևից զնում եյին կոմունիստները։

Ֆրանսիայում սոցիալիստական կուսակ-

ցության առաջնորդները չեն մտածել ու
չեն եւ մասնաւմ պրոլետարիատի դիկտա-
տուրայի համար պայքարի մասին: Մաս-
սաների ճնշման տակ նրանք ստիպված
եյին հայտարարել ընդհանուր գործադրութ-
Մասսաները փողոց գուրս յեկան: Վիթխա-
րի ընդհանուր գործադրութին մասնակցում
եր 4 միլիոն հոգի: Ակսվեց պրոլետարիատի
հոկայական շարժում, վորն առաջ քաշեց
«Խորհուրդների համար» լոգունդը:

Փետրվարի 17-ին քաշիզմի դեմ պայքա-
րում ընկածների թաղմանը դեպի Կոմունար-
ների պատճ ընթացող ցույցին մասնակցեց
200 հարգար պրոլետար: Փարիզը վաղուց ի
վեր չեր տեսել այդչափ հուժկու պրոլետա-
րական ցույց: Այդ պրոլետարական մեծ
որ եր, և կոմիուսակցությունը դեկավար,
դեր խաղաց: Լսում եր «Խորհրդականական»
յերգեցողությունը, «կորչեն քաշիստները»
«կեցցեն խորհուրդները» բացականչություն
ներով:

Ցեղ նույն այդ որերին Վիեննայի փողոց-
ներում, ինչպես նաև Ավստրիայի մի շարք
այլ քաղաքներում, դաժան մարտեր եյին
տեղի ունենում բանվորների ու քաշիստա-
50

կան ջոկատների միջև: Այդ մարտերը հիշեց-
նում եյին համաշխարհային պատերազմի
պատկերները, քանի վոր բուրժուազիան
մարտերում գործադրում եր ծանր հրետա-
նի, թնդանոթներով ոմբակում եր բան-
վորական տները: Վիեննայում ներկայու-
մըս բանվորական քաղաքամասերում չկամի
տուն, վորը չունենա այդ մարտերի հիտ-
էրը:

Հերոսաբար եյին կռվում Վիեննայի բան-
վորները: Սակայն սոցիալ-դեմոկրատական
առաջնորդների գավաճանության շնորհիվ
(այդ առաջնորդներն արտասահման փա-
խան), բանվորները միայն սլաշտապանվում
եյին, առանց փորձ անելու հարձակման
անցնելու: Ավստրիական յերիտապարդ կոմ-
կուսակցությունը տակավին թույլ եւ չկա-
րողացավ իր ձեռքը վերցնել բանվորների
հեղափոխական շարժման ամբողջ դեկավա-
րությունը: 10 հազար սպանված ու վիրա-
վոր տվեցին Վիեննայի բանվորները այդ
խական քաղաքացիական սլաշտերազմի
մարտերում:

Անցքերն Ավստրիայում ու ֆրանսիա-
յում հանդիսանում են ամենատայծող ա-

պացույցն այն վերլուծման, վոր տվել է
ընկ. Ստալինը կուսակցության 17-րդ հա-
մագումարում Նրանք փայլուն կերպով ա-
պացուցում են, վոր «հասունանում ե գրո-
հի գաղափարը մասսաների գիտակցության
մեջ»:

Ավտորիայում տեղի ունեցած անցքերն
ունեն միջազգային մեծ քաղաքական նշա-
նակություն: Նրանք բուրժուազիային ցույց
են տալիս, թե վորչափ յերերուն ու անկա-
յուն և նրա թիկունքը պատերազմի դեպ-
քում: Այդ անցքերը վկայում են լայն
խավերում տեղի ունեցած շրջադարձի մա-
սին՝ կապիտալիստական սիստեմի դեմ, պրո-
լետարիատի գիկատառքայի համար նրանց
մղած պայքարում: Նրանք ցույց են տալիս,
թե վորչափ մեծ և Խորհրդային Միության
որինակի ազդեցությունն ամբողջ միջազգա-
յին պլոտեարիատի վրա: Նրանք ցույց են
տալիս, թե վորչափ մեծ են այն ուժերը,
վորոնք թագնված են բանվոր դասակարգի
մեջ: Յեթե բուրժուազիան կանգնում ե պա-
տերազմի ճանապարհի վրա, ապա բանվոր-
ների դասակարգային պայքարն ավելի ու
ավելի սուր ձևեր ե ստանում: Բանվորները

դնում են իշխանության համար պայքարի
հարցը: Որակարգի հարց ե գառնում բուր-
ժուազիայի ու պլոտեարիատի միջև քաղա-
քացիական պատերազմի հարցը:

«Թող վոր այս շարժումները դեռևս
հասցրած չլինեն հաղթության: Բայց չե՞
վոր առանց «Պոտյումկինի» չեր լինի նաև
«Ավրորան»: Այսպիսի շարժումների որինակով
աճում ու ամրանում են կոմունիստական
կուսակցությունները, հեղափոխական գի-
տությունը սովորում են ամենալայն մասսա-
ները, և սովորում են հատուկ արագությամբ,
վորովհետև այժմ կապիտալիստական յերկոր-
ներում 1905 թվի «Պոտյումկինի» ճանա-
պարհն ավելի շուտ և հասցնում 1917 թվի
«Ավրորային», քան այս տեղի ունեցավ
ցարական Ռուսաստանում» (Մանուկյան):

«Ճարիգմը նույնպես, գերմանական ֆա-
շիզմի նման, ջախջախում եր բանվոր դասա-
կարգին ու բոլշևիկներին, մինչդեռ բոլշ-
ևիկները, բանվոր դասակարգի գլուխ անցած,
ջախջախեցին ցարիզմը...»

Ճարիգմը, ճիշտ այնպես, ինչպես և իմ-
պերիակիստական ծավոնիան, ուղում եր
հեղափոխությունը խափանել պատերազմ-

հային պրոլետարիատը պատրաստ է այսուշ
հետև ևս իր ուժի ու հնարավորության
չափով պաշտպանելու ԽՍՀՄ-ի բանվոր դա-
սակարգին: Բայց այդ բանը լուրջ պարտա-
կանություններ և դնում մեղ վրա: Այդ նշա-
նակում ե, վոր մենք պետք ե մեր աշխա-
տանքով արդարացնենք բոլոր յերկրների
պրոլետարների հարգածային բրիգադի պատ-
վագոր կոչումը: Այդ մեղ պարտավորեց-
նում ե ավելի լավ աշխատել և ավելի լավ
մարտնչել հանուն սոցիալիզմի վերջնական
հաղթանակի մեր յերկրում, հանուն սոցիա-
լիզմի հաղթանակի բոլոր յերկրներում:

Սյստեմից բվառում ե յերրորդ յեզրակացու-
